Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Պտղավանի միջնակարգ դպրոց

Թեմա՝Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը մայրենիի դասերին

Վերապատրաստող, մենթոր՝ Կարինե Սարուխանյան

Ուսուցիչ՝ Իսկուհի Մարտիրոսյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ1.Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը մայրենիի դասերին…….5

1.1. Երեխայի ինքնուրույն գործունեության ձևավորումը …….5

1.2. Տնային աշխատանքը որպես կրտսեր դպրոցականի ինքնուրույն ուսումնական գործունեության արդյունավետ հնար……...7

Գլուխ 2. Մայրենիի դասերին ինքնուրույն գործունեության կազմակերպման նոր ձևեր, մեթոդներ……...10

2.1 Մայրենիի դասերին ինքնուրույն գործունեության կազմակերպումը ժամանակակից ուսուցման մեթոդների միջոցով……...10

2.2Գործնական մաս……14

Եզրակացություն.....16

Օգտագործված գրականության ցանկ.....18

Ներածություն

Հետազոտության արդիականությունը: Տարրական դասարաններում ինքնուրուն գործունեությունը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Ինքնուրույն է համարվում այն գործունեությունը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն գործունեությունը դիտարկվում է որպես ուսուցման միջոց:

Ուսուցման ընթացքում ուսուցիչները կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն գործունեություն: Անկասկած , այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել, բայց այն դեռ ինքնուրույն գործունեություն չէ: Ինչպես գիտենք ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև: Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն գործունեության ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Գաղտնի չէ, որ արդի ժամանակաշրջանում տարրական և միջին դասարաններում ուսումնասիրության միջև գոյություն ունի անջրպետ: այս երևույթի պատճառները բավականին շատ են, սակայն դրանցից մեկն էլ կարելի է համարել տարրակա դասարաններում դասավանդող ուսուցիչների՝ կրտսեր դպրոցականների ինքնուրույն գործունեության հմտությունների ձևավորման վրա ոչ բավարար ուշադրության պակասը:

Նույնիսկ բազմաթիվ փորձառու ուսուցիչներ կազմակերպելով սովորողների ուսումնական գործունեությունը՝ չեն խթանում նրանց ակտիվության զարգացմանը: Այդպիսի ուսուցիչներից աշակերտը կարող է օգնություն ստանալ առաջին իսկ դժվարության դեպքում:Այդպես աշակերտներն այլևս առանձնապես ակտիվություն չի դրսևորում խնդիրների լուծման նպատակով ինքնուրույն ուղիների որոնման գործում: աշակերտներին տրվում է պատրաստի արդյունք, չանայծ որ նա կարող է ինքնուրույն որոնել այն: Երբեմն էլ ուսուցիչը չի հետաքրքրվում, թե ինչպես է աշակերտը գրել հարցի պատասխանը, այլ սահմանափակվում է արդյունքների ճշտության

ստուգումով, ինչը չի բարձրացնում աշակերտի հետաքրքրությունը՝ առաջադրանքի կատարման համար, տարբեր ուղիների որոնման գործում:

Այս հայտարարությունների շրջանակով էլ պայմանավորված է հետազոտական աշխատանքի թեմայի հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Մշակել և ներկայացնել մայրենիի դասերին ինքնուրույն գործունեության կազմակերպումը, ուսուցման ժամանակ կիրառվող բազմաթիվ մեթոդական հնարների կիրառման ճանապարհով մշակել թեմայի արդյունավետությունը բարձրացնող մեթոդական ամբողջական համակարգ, որի կիրառումը կնպաստի ինքնուրույն գործունեության գործնական յուրացմանը, նյութի գիտակցական, առավել տրամաբանված ըմբռնմանը, սովորողների բազմաբնույթ ինքնուրույն մտածողության զարգացմանը:

Հետազոտության խնդիրներն են.

1. փորձարկել և դասակարգել մայրենիի դասերին ինքնուրույն գործունեության այնպիսի արդյունավետ մեթոդներ, որոնք կնպաստեն ինքնուրույն գործունեության զարգացմանն ու ձևավորմանը, սովորողների
2. մշակել ինքնուրույն գործունեության արդյունավետությանը նպաստող վարժությունների համակարգ,
3. առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետության հավաստիությունն ստուգելու նպատակով անցկացնել գիտափորձեր հանրապետության տարբեր դպրոցներում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտված աղբյուրների ցանկից, հավելվածներից, ընդհանուր ծավալն է 16 համակարգչային էջ՝ առանց հավելվածների:

Գլուխ1.Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը մայրենիի դասերին

1.1. Երեխայի ինքնուրույն գործունեության ձևավորումը

Մանկավարժության մեջ ընդունված է առանձնացնել ուսուցմա երեք հիմնական ձևերը.

- դոգմատիկ կամ սերտողական
- բացատրական և ակտիվ
- պրոբլեմային կամ զարգացնող ուսուցում:

Առաջին երկու ձևերն ընդունված է անվանել ավանդական: Դրանց նպատակն է՝ գիտելիքների հաղորդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը:Այս դեպքում աշակերտների զարգացումը դառնում է ուսուցման ածանցված , հատուկ չպլանավորված արդյունք:Իսկ երրորդն անվանվում է նորացված ձև: Վերջինս և՛ ռազմավարությունը, և՛ մարտավարությունն ուղղվում են աշակերտների ներուժի ձևի մերժում: Պարզապես ավանդականի կիրառումը դառնում է ուսուցման նպատակին հասնելու միջոց:

Այսպիսով արդի ուսուցման հիմնական նպատակներն են.

- հաղորդել որոշակի գիտելիքների հանրագումար
- ձևավորել այդ գիտելիքները կիրառելու կարողություններ
- սովորել սովորեցնել
- ձևավորել ստեղծագործական մտածողություն, նորը ստեղծելու կարողություն:[1]

Վերջին տարիներին մի խումբ գիտաշխատողներ Ս. Պարնասի ղեկավարությամբ ուսուցման գործընթացում ստեղծագործական իրադրություն ստեղծելու նպատակով առաջարկում են՝

1. Ստեղծագործական դրսևորումներին խոչընդոտող արգելքների վերացում: Օգնել աշակերտներին՝ ձեռք բերելու ինքնավստահություն,

[1] Տեր-Միրաքյան Հ., «Դասավանդության ուղեցույց, օրինակելի դասեր և դրանց տեսությունը», Թիֆլիս, 1908

այսինքն շրջապատի հետ հարաբերությունները կառուցել այնպես, որ համարձակ, առանց երկար մգտածելու արտահայտեն մտքերը։ Աշակերտի կողմից մտածված յուրաքանչյուր խելացի դատողության համար պետք է քաջալերել նրան։

2. Մեծ դեր հատկացնել աշակերտի ենթագիտակցությանը, որն աշխատում է անգամ այն ժամանակ, երբ նա անմիջապես չի լուծում տրված առաջադրանքը։ Նույնիսկ մակերեսայնորեն արտահայտված մտքերն ու դատողությունները պետք է նկատվեն ժամանակին, հղկվեն, պարզաբանվեն և օգտագործվեն։
3. Սխալներն ուղղել զգուշությամբ, հատկապես բանավոր խոսքում օգտագործել ուղղման ճիշտ մեթոդներ, հաճախակի չընդհատել աշակերտների խոսքը, չկանխել մտքի զարգացումը, չնվաստացնել նրան։ Ոչ ճիշտ մոտեցման պատճառով աշակերտը կխուսափի խոսք կառուցել, անվստահ կլինի իր խոսքի նկատմամբ, և կխաթարվի նրա մտքի թռիչքը։
4. Պատկերավորման միջոցների, փոխհարաբերությունների և համեմատությունների օգտագործումը ընդլայնում են աշակերտների ստեղծագործական հնարավորությունները։
5. Մտավոր նախավարժանքի հնարավորության ստեղծումը։ Աշակերտներին տալ այնպիսի առաջադրանքներ, որոնք մղում են ինքնուրույն մտածելու և մտքերն ազատ արտահայտելու։
6. Խթանել աշակերտների երևակայությունը։ Կրտսեր դպրոցականի երևակայությունն անսահման է։ Այն ստեղծագործական մտածողության հիմքն է։ Ուստի պետք է զարգացնել այն։
7. Բացատրական ընթերցանության մեթոդի ճիշտ օգտագործումը կնպաստի շրջապատն ընկալելու ունակության ակտիվացմանը, ընդարձակ և հագեցած գիտելիքներ ստանալու գործընթացին։
8. Ստեղծագործական հնարավորությունների զարգացման կարևոր պայմաններից է գիտելիքների ցանկի ընդլայնումը։ Յուրացված

գիտելիքները պետք է օգտագործվեն, հակառակ դեպքում կմատնվեն մոռացության։

9. Երեխան պետք է զգա իր առաջխաղացումը , հետազոտական կարողությունների զարգացումը կօգնի նրան՝ դատողություններ անելու, եզրահանգումներ կատարելու։
10. Ուսուցման ընթացքում ուսուցչի խնդիրն է՝ դասագրքի և ուսումնաօժանդակ նյութերի ճիշտ օգտագործմամբ աշակերտների մեջ ճանաչողական կողմնորոշումը ձևավորել և նրանց ներգրավել ստեղծագործական։[2]

1.2. Տնային աշխատանքը որպես կրտսեր դպրոցականի ինքնուրույն ուսումնական գործունեության արդյունավետ հնար

Տնային աշխատանքն աշակերտի ծավալած ուսումնական գործունեությունն է, որը նա կատարում է ինքնուրույն։ Այսինքն՝ տնային աշխատանքի կարևոր խնդիրներից մեկն է աշակերտի ինքնուրույնության ձևավորումն է, որը մեծապես նպաստում է նրա՝ ուսումնաճանաչողական գործունեություն ծավալելու կարողության զարգացմանը։

Տնային հանձնարարությունները կատարելիս աշակերտը փորձում է ինքնաստուգման տարբեր ձևեր և ընտրում դրանցից իր համար լավագույնը, բացահայտում է ստեղծագործական մոտեցումներ։ Այս դեպքում միայն տնային հանձնարարությունների կատարման գործընթացը կդառնա ուսումնառության և ինքնակրթության խթանիչ։ Այսինքն՝ տային աշխատանքն առաջին հերթին ինքնակրթության ճանապարհ է։

Տնային ուսումնական աշխատանքի կազմակերպումը ուսումնադաստիարակչական գործընթացի շղթայում ամենաբարդ օղակն է։ Բազմաթիվ ուսուցիչներ, ծնողներ այն կարծիքին են, որ տնային առաջադրանքները տրվում են, որովհետև ուսուցիչը դասի ընթացքում չի կարողացել իր պարտականությունները կատարել և դա փոխլրացնում է մեծ ծավալով տնային

[2] Ջուլիետա Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատ., 2015.-316։

աշխատանքներ հանձնարարելով: Իսկ ուսուցիչների կարծիքով, եթե տնային աշխատանք քիչ է հանձնարարվում, մեխանիկորեն նվազում է իր առարկայի դերն ու նշանակությունը: Մեր ուսումնասիրությունները հանգեցրել են այն համոզման, որ անհրաժեշտ է կարևորել տնային աշխատանքի բազմազանությունն ու հնարավորությունները, գնահատել դրանց դերն ու նշանակությունը դպրոցականի դաստիարակության և ուսումնառության գործում և առավելապես հանձնարարել այն ինչ զետեղված չէ դասագրքում: Ի՞նչ են սիրում 6-10տարեկան երեխաները. ոչ սովորական պատմություններ հորինել: Ուրեմն անհրաժեշտ է տալ նրանց այդ հնարավորությունը՝ գիտակցելով, որ երեխան ոչ թե մեքենա է, որը պարտավոր է կատարել որոշակի աշխատանք, այլ մարդ, որն աշխատանքից ուրախություն ու օգուտ է ակնկալում: Ուրեմն տնային աշխատանքներից ամեն դեպքում չի կարելի հրաժարվել: Սակայն անհրաժեշտ է տնային աշխատանք հանձնարարել այն դեպքում, երբ այն խստորեն հիմնավորված է, անհատականացված ու հետաքրքիր՝ հաշվի առնելով 2-4-րդ դասարաններում տնային աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջները. [3]

Դասվարների հետ հարցման ընթացքում[4] պարզեցինք, որ տնային աշխատանքների կատարման հետ կան որոշակի խնդիրներ.

- Աշակերտները ճիշտ չեն պլանավորում տնային առաջադրանքների կատարման աշխատանքային ժամերը: Դա հանգեցնում է առաջադրանքների հապճեպ կատարմանը և ուսումնսիրվող նյութի մակերեսային յուրացմանը:
- Գրավոր տնային առաջադրանք շատ դպրոցականներ կատարում են՝ առանց նախնական տեսական նյութի յուրացման կամ կրկնության: Այդ պատճառով էլ նրանք թույլ են տալիս էական սխալներ:
- Դժվարություններ են ծագում նաև, երբ սովորողները ծանրաբեռնված են լինում տնային առաջադրանքներով:

---

[3] Ա. Տեր Գրիգորյան, Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, 1976

[4] Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների մասին, ՄԱՍ 1, Ե.,, «Զանգակ», 2013թ.

- Կատարման արդյունքի վրա բացասաբար է ազդում նաև սովորողների կարողություններին անհամապատասխան առաջադրանքների հանձնարարումը։Խանրաբեռնվածությունը հաճախակի պայմանավորված է ոչ միայն հանձնարարված տային աշխատանքի ծավալով, այլև սովորողների նախապատրաստվածության մակարդակով։

Չմոռանանք, որ 2-4 դասարաններում տնային աշխատանք նպատակահարմար չէ հանձնարարել հանգստյան, տոնական օրերին և արձակուրդներին։

Կարող ենք նաև առաջադրել ոչ ստանդարտ բովանդակությամբ տնային առաջադրանքներ.

1. Դասագքրի տեքստի հետազոտում,
2. Խնդրի ինքնուրույն կազմում,
3. Կանոնների, նոր տարբերակների մշակում, ձևակերպում և այլն,
4. Թեստերի, առաջադրանքների, փոխստուգամն համար քարտերի նախապատրաստում,
5. տեստերի խմբագրում
6. Թույլ տված սխալների ուղղում
7. Նախապատսրաստում ուսումնասիրվելիք թեմայի, տեղեկատվության որոնում, հատվածների, հոդվածների որոնում,
8. Հետազոտական, ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, որոնք ենթադրում են երկարատև ինքնուրույն աշխատանք։

Այսպիսով, տնային աշխատանքները նպաստում են աշակերտների ինքնուրույն աշխատանք կատարելու կարողության զարգացմանը, ինքնարտահայտմանը, տարաբնույթ ուսումնական գործունեություն կատարելու միջոցով ինքնադրսևորմանը։ Այդպիսի տնային աշխատանքների կատարման ընթացքում մշակվում են նաև բառարանից, լրացուցիչ ու տեղեկատու գրականությունից օգտվելու կարողություններ, ձևավորվում է որոնողական, հետազոտական գործունեություն ծավալելու կարողություն

Գլուխ 2. Մայրենիի դասերին ինքնուրույն գործունեության կազմակերպման նոր ձևեր, մեթոդներ

2.1 Մայրենիի դասերին ինքնուրույն գործունեության կազմակերպումը ժամանակակից ուսուցման մեթոդների միջոցով

Ուսուցման ժամանակակից մեթոդները նպաստում են սովորողների սոցիալական հմտությունների/հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական և ինքնուրույնության զարգացմանը:

Գաղտնիք չէ, որ երեխաների իմացական հետաքրքրությունների աշխարհը լի է հազար ու մի «ինչուներով», և նրանք օր առաջ ուզում են ստանալ իրենց հարցերի պատասխանները: Եթե մեծերի կողմից լինում են իրենց հարցերի պատասխանները հնարավորինս շուտ ստանալու գործընթացին:

Սկզբում այդ օգնությունը կլինի մշտապես բոլոր փուլերում՝ թե՛ հետզատության նյութ հավաքելիս ու համակարգելիս, թե՛ մեթոդներ փնտրելիս: Նոր տպավորությունների անհագ ծարավը, հետաքրքրասիրությունը, ինքնուրույն կատարելու ցանկությունը, ձգտումը և բացահայտումը հատուկ է վառ երևակայությամբ օժտված և էներգիայով լեցուն երեխաներին, ուստի ուսուցչից պահանջվում է այդ էներգիան ուղղորդել երեխաների այդ մեծ նպատակի իրականացմանը:[5]

Միաժամանակ երեխաներին կարելի է սովորեցնել, թե որտեղից կարելի է ինքնուրույն ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն:

Առաջին դասարանում նախընտրելի է տալ այսպիսի առաջադրանքներ:

Օրինակ՝

Հորինի՛ր կամ գտի՛ր.

- Ո՞ր կենդանիներն են ձմռանը քուն մտնում, և ինչու՞:

[5] Ջուլիետա Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատ., 2015.-316:

- Առավոտյան ինչպե՞ս ես պատրաստվում դպրոց գալուն:
- Ինչպե՞ս ես օգնում մայրիկիդ:
- Քո պայուսակը, հագուստդ ո՞վ է դասավորում: Փորձե՞լ ես դու ինքդ դասավորել:
- Փոքր եղբորդ/ քրոջդ ինչպե՞ս ես օգնում:
- Ի՞նչ ես տեսնում այս լուսանկարներում: Դու ինչպե՞ս կվարվեիր:

Երկրորդ դասարանում կարելի է ձևակերպել խնդիրները տեսնելու և դրանք յուրովի լուծելու ունակություն՝ հարցեր առաջադրել, տալ մեկնաբանություններ, կատարել փորձեր: Տվյալ երևույթի կամ հարցի լուծման վերաբերյալ կարծիք հայտնել կամ փոխել սեփական կարծիքը, ուսումնասիրվող առարկային նայել բազմակողմանիորեն, աշխատել տեսնել այն, որը չեն նկատել առաջին հայացքից կամ սովորաբար չեն նկատում:

Օրինակ՝

Ոսկեզօծ աշուն էր: երկինքը ամպամած էր: Անձրև էր գալու: Խաղալիքները բակում թափել էր Աշոտը: Հանկարծ ամպի գոռգոռոց լսվեց: Աշոտը. . . :[6]

Շարունակի՛ր պատմությունը.

Ինչպե՞ս կարձագանքես նման իրավիճակում եթե հայտնվես:

Գրատախտակի մոտ գտնվող աշակերտը ստանում է հարցաթերթիկ: Պատասխանում է հարցին՝ առանց այն բարձրաձայնելու: Մյուսներին անհրաժեշտ է գուշակել՝ ի՞նչ հարց էր գրված հարցաթերթիկում:

Վարկածների, առաջարկությունների և սադրիչ գաղափարների իրական և մտացածին հարցեր ենք ստեղծում, որպեսզի հասկանանք, թե որքան ինքնուրույն է երեխան, և ինչպես զարգացնենք նրա ինքնուրույությունը:

Տարրական դպրոցի 3 –րդ և 4-րդ դասարաններում պետք է շարունակել առաջին և երկրորդ դասարաններում սկսած աշխատանքը, այսինքն ձևավորել

[6] Ա.Ղարիբյան և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1955

աշակերտների ուսումնահետազոտական և ինքնուրույն գործունեությունը և այն հասցնել կատարելության։ Այս դասարաններում խմբային աշխատանքների հետ մեկտեղ խրախուսվում են հատկապես անհատական աշխատանքները։[7]

Սովորողների ինքնուրույն գործունեության հաջողությունը հիմնականում պայմանավորված է ուսուցչի և ծնողի աշխատանքի իմաստալից պլանավորմամբ։ Նրանք պարտավոր են օգնել աշակերտին հաղթահարելու դժվարությունները, վերահսկելու աշխատանքների ուղղությունը, ապահովել երեխայի կապ արտաքին աշխարհի հետ։

Ուսումնառության ընթացքում երեխան պետք է տեսնի իր աշխատանքի արդյունքը և աշխատի այն իրականություն դարձնել՝ այդ ճանապարհին զարգացնելով ինքնուրույն գործունեությունը, ձեռք բերելով նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ։

Ինքնուրույն գործունեության ընթացքում աշակերտները՝

- Կսովորեն ինքնուրույն հասնել արդյունքի,
- Կանխատեսել նպատակին հասնելու ճանապարհին առաջացած խնդիրներն ու դրանց լուծման ուղիները,
- Գնահատել սեփական և ընկերների աշխատանքի արդյունքները,
- Կձևավորվեն ինքնուրույն որոնելու և ընտրելու հմտություններ,
- Սեփական գործունեության պլանավորում, գործողությունների քայլաշարը մշակելու և վերլուծելու, ցանկացած իրավիճակում կողմնորոշվելու հմտություններ։

[7] Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 4», Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2012թ., 192 էջ։

2.2 Գործնական մաս

Հետազոտությունն անց ենք կացրել Պտղավանի միջնակարգ դպրոցում: Հետազոտությանը մասնակցել են ուսուցիչներ, ծնողներ և աշակերտներ: Հետազոտության իրականացման ժամանակ կիրառել ենք հետևյալ մեթոդները.

- ✔ Հարցում
- ✔ Դիտում:

Հարցումն անց է կացվել դասվարների, ծնողների և աշակերտների հետ: Մեր հարցման ադյունքներից պարզ դարձավ, որ երեխաներն ունեն ինքնուրույն գործունեության զարգացման լուրջ խնդիրներ: Մեր հետազատության ընթացքում պարզ դարձավ, որ թե՛ որոշ ծնողներ, և թե՛ ուսուցիչներ երեխաների փոխարեն են կատարում ամեն մի առաջադրանք կամ հուշում են , կամ գրում և պատրաստի տալիս երեխային: Երեխաներն անվստահ են, չեն վստահում իրենց ուժերին, վախենում են սխալվելուց և միշտ օգնության են դիմում կամ ուսուցչին կամ էլ ծնողին:

Նշենք նաև, որ մեր դիտարկումների ընթացքում նկատեքինք, որ ուսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն գործունեությանը նպաստող ակտիվություններ: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշաերտներին ինքնուրույն աշխատել, սակայն այն դեռ այդքան էլ ինքնուրույն չէ: Ավելացնենք նաև, որ ինքնուրույն գործունեության նպաստող ակտիվություններն այդքան էլ բավական չէին, ուսուցիչերը երեխաներին չէին դրդում ինքնուրույն աշխատելու, չէր կիրառվում համապատասխան մեթոդներ, հետազոտական աշխատանքերը բացակայում էին:

Տարրական դասարաններում դասերի ընթացքում մենք նկատեցինք, որ դասերի ընթացքում գերակշռում էր ուսուցման ֆրոնտալ ձևը, երբ աշակերտների գործուղությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջական հրահանգներից: Այդ գործողությունները հիմնականում կատարվում էին գրատախտակի մոտ: կարծում ենք, նման գործողությունները հիմնականում արգելակում են երեխաների ինքնուրույն գործունեության զարգացմանը, և արդեն բարձր դասարաններում սովորողները հայտնվում են անօգնական վիճակում՝ գրքի

շուրջ իրականացվող ինքնուրույն աշխատանքի, առաջադրանքների ինքնուրույն լուծման, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարման ընթացքում: Առաջադրաքների ծավալը նրա ուժերից վեր է դառնում, աշխատանքի տեպը՝ դադաղ:

Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:

Եզրակացություն

Թեմայի հանգամանալից ուսումնասիրությունը և հարցման արդյունքների վերլուծությունը մեզ հանգեցրին հետևյալ եզրակացությունների.

Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով։

Ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ։ Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը։

Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները։

Այսպիսով, ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար։ Պետք է մշտապես հիշել, որ ոչինչ հաստատուն չէ, բացի փոփոխությունից, քանզի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները ևս կապված են հասարակական կյանքի պատմական զարգացման հանգամանքների և մանկավարժական նորագույն փորձի ու նվաճումների հետ։

Այսպիսով՝

1. Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը և մեր ուսումնասիրությունների ընթացքում պարզ դարձավ, որ երեխաներն ակտիվ մասնակցում են դասերին, սակայն չի կիրառվում բավականաչափ ժամանակակից ուսուցման մեթոդներ։

Ելնելով վերոբերյալից կցանկանայինք անել մի քանի առաջարկություն.

1. Հանդիպումներ կազմակերպել ուսուցիչների հետ: Հանդիպումները պետք է վերաբերվեն տարբեր թեմաներին և լինեն կառուցողական, ծառայեն ժամանակակից տեղեկատվության և գաղափարների փոխադարձ իրազեկվածությանը:
2. Ցանկալի է ստեղծել ուսուցիչների ակումբներ: Ակումբները կոմպլեկտավորել ըստ մասնագիտության, ակումբներում քննարկել ժամանակակից ուսուցման տարբեր մեթոդների արդյունավետության և այլ խնդիրների մասին:
3. Ուսուցիչները ձեռք բերեն ժամանակակից ուսուցման մեթոդների ձեռնարկներ, ուսումնասիրեն և կիրառեն համապատասխան դասերի ժամանակ, ուշադրություն դարձվեն ինքնուրույն գործունեության կազմակերպմանը:

Նշենք, որ աշակերտը պետք է գիտելիք ստանա ոչ թե պատրաստի ձևով, այլ դրանք ձեռք բերի ինքնուրույնաբար, հետզոտական, համագործակցային աշխատանքի արդյունքում: Ինքնուրույն գործունեության զարգացմանն են նպաստում համագործակցային ուսուցումը, ճանաչողական-որոնողական աշխատանքները, խաղային տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպումը, ինքնահաստատման կարողությունների զարգացումը: կարևոր է նաև, որ աշակերտը տեսնի և հասկանա իր թերությունները, և դրանց շտկման համար դրսևորի ձգտում, կարողություն և կամք: Ինչպես գիտենք ուսումնական գործունեության մեջ կարևորվում է նաև երեխայի ակտիվությունը, ինչն առավելագույն դրսևորվում է խաղային ուսուցման ժամանակ:

Խաղային գործունեության ընթացքում երեխան՝

- Ինքնադրսևորվում է, բացահայտում իր առանձնահատկությունները,
- Սոցիալական հարաբերությունների մեջ է մտնում ընկերների հետ և ինքնուրույն կարգավորում իր հարաբերությունները,
- Փորձում է ինքնուրույն հաղթահարել խոչընդոտները,
- Առաջադրված խնդիրներին սովորական կրում անսպասելի լուծումներ է գտնում,
- Սովորում է իր առջև խնդիրներ դնել և լուծել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ, Ուսուցիչների համար, Կրթության ինստ. Հրատ., 2004թ., 180 էջ:
2. Ա. Տեր Գրիգորյան, Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, 1976
3. Ա.Ղարիբյան և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1955
4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 3», Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2011թ., 160 էջ:
5. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 4», Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2012թ., 192 էջ:
6. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների մասին, ՄԱՍ 1, Ե.,, «Զանգակ», 2013թ.
7. Ջուլիետա Գյուլամիրյան, Դասի կազմակերպման առանձնահատկությունները վեց տարեկաններով համալրված առաջին դասարանում,-Եր. «Լույս», 1984:
8. Ջուլիետա Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատ., 2015.-316:
9. Տեր-Միրաքյան Հ., «Դասավանդության ուղեցույց, օրինակելի դասեր և դրանց տեսությունը», Թիֆլիս, 1908